սատրազմէյին ամէն բան կը բացատրէ որպէս. և մենք փառաւ ենք որ հայ ժողովուրդը ոչ միայն երկիւղած և կրօնասէր է, այլ նաև ողջմիտ, այնպէս որ ամէն զգուշութիւն և հաշտեցողութիւն կ'ընէ, որպէս զի հաղորդութեան Սուրբ Խորհուրդը անարգուած չըլլայ անմաքուր միջավայրի մը մէջ։

Այս զգուշութիւնը ջերմապէս կը յանձնարարենք այն բոլոր հայ գաղութներուն, որոնք զուրկ են իրենց սեփական աղօթավայրերէ և ստիպուած են յարմար սրահի մէջ կատարել հոգևոր պաշտամունք և Ս. Պատարագ։

*Խմբագրութիւն ՍԻՈՆի*

# ՈՒՂԵՐՁ

*Արտասանուած Սուրաբայայի Հայ Ազգային Վարչութեան նախագահ Պ. Հայրապետ Յակոբեանի կողմից՝ Պարսկա-Հնդկաստանի Հայոց թեմակալ Առաջնորդ Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոս Տէր Մովսէսեան-Մագիստրոսի ծննդեան տարեդարձի և մեկնումի առթիւ։*

Նորին Բարձր Սրբազնութեան
Տ. Մեսրոպ Արքեպս. Տէր-Մովսէսեան-Մագիստրոս, Բարեխնամ առաջնորդ թեմի Հայոց Պարսկա-Հնդկաստանի
Աստ

Գերապատիւ Հայր,

Սուրաբայայի Հայ հասարակութիւնը չափազանց բախտաւոր է համարում իրեն որ պատեհութիւն ունի այսօր տօնելու ձեր ծննդեան տարեդարձը և այդ առթիւ այստեղ հաւաքուած մատուցանելու Ձեզ իւր յարգանքներն ու մեծարանքները։

Թոյլ տուէք, խնդրեմ, հասարակութեան կողմից խանդավառաբար շնորհաւորել Ձեզ նոյն տօնը և մաղթելու ձեզ երկար և բարեբաստիկ օրեր, առողջութիւն, ոյժ և եռանդ, դեռ երկար տարիներ շարունակելու Ձեր անձնուէր գործունէութիւնն ու նուիրական առաքելութիւնը։

Իբրև գոյն փոխարինութիւն այն եռանդուն և բեղմնաւոր գործունէութեան որ դուք ցոյց էք տուել Պարսկա-Հնդկաստանի Հայոց ընդարձակածաւալ թեմի ծանր և պատասխանատու պաշտօնը Ձեր ստանձնելու օրից, թոյլ տուէք, խնդրեմ, մատուցանելու Ձեզ՝ քաղաքիս հայ հասարակութեան կողմից մի փոքրիկ նուէր, որը բարեհաճեցէք գործածել ըստ Ձեր հայեցողութեան։

Ձեր այստեղ ժամանելու օրից մինչև այսօր դուք իբրև քաջ հովուապետ, իբրև հարազատ պատգամաբեր և իբրև սիրուն Հայաստանի, չդադարեցիք շարունակաբար՝ Ս. Եկեղեցւոյ բեմից քարոզութիւններով, դասախօսութիւններով և մասնաւոր խօսակցութիւններով Ձեր զօրեղ և հեղինակաւոր ձայնով հաղորդել Ձեր պանդուխտ զաւակներին մերթ ուրախ և մերթ տխուր լուրեր, պատգամներ և տեղեկութիւններ մեր վերածնուող հայրենիքի, Մայր Աթոռի և հայրենակիցների մասին, որոնք, սակայն, բոլորովին տարբեր էին մեր ցարդ լսածներից՝ իրենց հարազատութեամբ, ճշդութեամբ, քաղցրութեամբ և վեհութեամբ։

Դուք Ձեր համոզիչ և փաստալից խօսքերով հանգստացրիք մեր խռովուած սրտերն ու յուզուած միտքերը և վճիտ կերպով պատկերացրիք մեր առաջ մեր նորաբողբոջ հայրենիքի քաջալերիչ ներկայն և պայծառ և փառաւոր հեռանկարը, և վերջապէս թէ՛ հաւատացեալներին և թէ՛ թերահաւատներին համոզեցիք թէ կա՛յ մի հայրենիք, որով կարելի է պարծենալ և հըպարտանալ և որը վերածնութեան ուղիղ ճանապարհի վրայ է գտնւում։ Մի խօսքով, ձեր նշանաբանն էր ամէն բան հայրենիքով և ամէն բան հայրենիքի համար։

Որովհետև թերևս այսօր վերջին անգամն է որ պատիւ և պատեհութիւն ենք ունենում հրապարակաւ խօսելու Ձեզ հետ, Ձեր մօտ օրերում տեղիս մեկնելու պատճառով, թոյլ տուէք, խնդրեմ, քաղաքիս Հայ հասարակութեան կողմից յայտնելու Ձեզ խորին երախտագիտական զգացումներ Ձեր հովուապետական այցելութեան և Ձեր հայրենակարօտ զաւակներին հոգեպէս և ազգայնապէս մխիթարելու համար։ Ձեր այցելութեան յիշատակը միշտ

digitised by A.R.A.R.@

թարմ և կենդանի պէտք է մնայ մեր սըր-տերում:

Ձեր թանկագին խօսքերն, հայրական խրատներն ու նուիրական աւանդները խոր արմատ են ձգել մեր սրտերի մէջ, որոնք և խոստանում ենք ամենայն սրբութեամբ պահպանել և գործադրել: Դուք իբրև նոր իմն առաքեալ եւ քարոզիչ խօսեցիք մեզ հետ բոլորովին նոր եւ համոզիչ լեզուով, հաղորդեցիք մեզ նոր պատգամներ. առողջ եւ ժամանակակից ըմբռնողութեամբ միտ-քեր, որոնք խոր տպաւորութիւն գործե-ցին մեր սրտերի եւ մտքերի վերայ: Յա-ւիտեան չենք կարող մոռանալ Ձեր այն ոսկեղէնիկ պատուէրը թէ «Վատին լաւ ա-սէք որ լաւանայ եւ լաւին էլ լաւ ասէք որ աւելի լաւանայ»:

Խոնարհուած գլուխներով և բեկան-ւած սրտերով մաղթում ենք մեր սիրեց-եալ Սրբազան Առաջնորդ Հօրը բարի եւ անդորր ճանապարհ: Թող պահապան հը-րեշտակը պահապան լինի Ձեզ և՛ փըր-կէլով ամէն տեսակ փորձութիւններից, ա-ռաջնորդի Ձեզ իր նպատակակէտը:

Լիայոյս ենք Սուրաբայայի Ձեր այցե-լութիւնից դուք կը տանէք Ձեզ հետ լաւ տպաւորութիւններ և քաղցր յիշատակներ:

Հայցում ենք Ձեր հայրական աստուա-ծեղ օրհնութիւնները, եւ յանձնում ենք մեզ Ձեր ջերմեռանդ աղօթքներին:

Որդին յարգանօք համբուրելով Ձեր օծեալ Ս. Աջը, պատիւ ունիմ մնալ

Ի դիմաց Սուրաբայայի Հայ հասա-րակութեան

Ձեր Բարձր Սրբազնութեան անձնուէր եւ խոնարհ որդի՝

Հ. ՏԷՐ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ

Նախագահ տեղական Հայ Ազգային Վարչութեան

Սուրաբայա 7 Մայիս 1928

# ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐՒՈՅ

### ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

Պահեսցուք առաքինանալ այժ Նորա, և ա-ղաւթիւք զաւրանա[յ]: Խորգով և հսկ-մամբ մանկանալ: Զիք ծանրութիւն որում ոչ հանդարտէ: Զի զաւրաւոր է յոյժ կա-մել ազատութեան յապաշխարութեան: Զի կամելն իւր վաճառական է: Լնու զբեռն զանձիւք, բառնալ զլին երանութեամբք երթալ ընդ առաջ աւետեաց: Բանայ հանէ ի միջոյ նորա զառաքինութիւնս յարքայու-թեան: Զըզգաստն հանէ զիւրեղ իւր, և կա-տանն զմարգարիտ իւր: Միւսն հանէ զզանձս իւր իբրեւ զականս պատուականս, վկայք հանեն զառաքինութիւնս, խոստովանեալք զպսակս իւրեանց: Այսպիսի զաւրութիւն ամենայն՞ գթ է, ծածկեալ է յազատութեան եւ նմա է: Դայ զաւազան ընդաստուցանէ, զի յարիցէ յաւէ՛ զառն զանձի իւրոյ: Եթէ բանութեամբ վարէ զմեզ, չի՞ք ի մեզ ա-զատութիւն: Եւ եթէ չիք ազատութիւն, ընդէ՞ր պահանջէ զյանցուածս: Իսկ եթէ գոյ, չէ արդէն բանի վարել զիշխանութիւն մեր: Դատել լինէր ամենագաւիչն[1] ի զատուածս[1] վասն երկուցունց[2]: Զի եթէ գոյ ընդէ՞ր զրկեալ գնա: Եւ եթէ չիք, ընդէ՞ր պահանջէ զնա: Բա՞ւ է թէ բռնադատէր առայզն այն զկապ զի յարիցէ ընթացի: Բա՞ւ լիցի եթէ բռնադատիցէ զկոյր այն որոչել զգոյս: Նա կուրացոյց եւ նոյն բռնադատէ՞ տեսանել զլոյսն որ ոչ ետ նմա: Ոչ միայն ինքն ոչ բռնադատէ, այլ եւ այնմ որ բռնադատէն բարկանա՛յ: Բռնադատեաց Բաղաամ զզբաստն իւր, ցասեա՛ւ առայզն իբրեւ եաւս զնա: Փոխա-նակ անասնոյն բերանակապի, հրեշտա՛կ զատեցաւ ընդ Բաղամու[3]: Երաց առայզն

[1] Պակասէ ի բազգիրս:
[2] Այսպէս յօրինակին:
[3] Այսպէս յօրինակին:

digitised by A.R.A.R.@